Սերունդները պետք է գիտենան ազգի լավագույն զավակների մասին: Ավագ սերունդը պետք է հոգա իր արժանավոր հայրենակիցների անունը այն երկրի, քաղաքի, փողոցի ու տան մասնիկը դարձնելուն, որտեղ ծնվել և ստեղծագործել են նրանք ու դարձել ծննդավայրի հպարտությունը: Ահա այս գաղափարի իրականացման գեղեցիկ վկայություն դարձավ սեպտեմբերի 22-ին Ախալցիխեում կայացած հանդիսությունը, որը նվիրված էր հայ
մեծ գեղանկարիչ
Վահրամ
Գայֆեճյանի
հուշաքարի բացմանը:
Մեծ գեղանկարչի անունը նրա սիրելի քաղաքի վկայություն դարձնելու մտահղացումը Ախալցիխեի ստեղծագործողների միությանն էր, որի իրականացմանը օժանդակեցին և աջակցեցին Ախալցիխեի տեղական իշխանությունները, մունիցիպալիտետը: Հուշաքարը բացվեց
հենց
այն
տան
պատին

,
որտեղ
ծնվել
եւ
մեծացել
էր
մեծ
նկարիչը
:
Իսկ Վահրամ Գայֆեճյանի գեղեցիկ ձևավորված, բարձրաճաշակ հուշաքարի հեղինակը
Ախալցիխեի
Ստեղծագործողների
միության
նախագահ
Ալեքսանդր
Իգիթխանյանն
է:

Միջոցառմանը ներկա էին Սամցխե-Ջավախքի նահանգապետ Իվանե Ծիկլաուրին,Ախալց
խեի
ք
աղաքապետը
,
փոխքաղաքապետը
եւ
այլ
պետական
գործիչներ: Հանդիսությանը իրենց մասնակցությունն էին բերել
Վրաստանում Հայաստանի
Հանրապետության արտակարգ
եւ
լիազոր
դեսպան
Հովհաննես
Մանուկյանը
,
Սփյուռքի
Նախարարության
Կովկասյան
բաժնի
ղեկավար
Տարոն
Շագոյանը
, «
Կարին

»
երգի
-
պարի
համույթի
ղեկավար
Գագիկ
Գինոսյանը
,
կոմպոզիտոր
Գեւորգ
Մանասյանը
,
Վիրահայոց թեմի մշակույթի գործիչների և մտավորականների կազմով պատվիրակությունը՝
«Հայարտուն» մշակույթի կենտրոնի համակարգող Լևոն Չիդիլյանի գլխավորությամբ,
հոգեւորականներ,
գործարարներ
ու
մտավորականներ
:
Վահրամ Գայֆեճյանի հուշաքարի բացումը վստահվեց Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան՝
Հովհաննես
Մանուկյանին
,
Սամցխե
-
Ջավախքի
նահանգապետ՝
Իվանե
Ծիկլաուրիին
եւ

նկարիչ
Վահրամ
Գայֆեճյանի
դստերը
,
ովքեր
միասին
հանեցին
կտավը
հուշաքարից

:
Վրաստանում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Հովհաննես Մանուկյանն իր խոսքում խոր
ին
շնորհակալություն
հայտնեց
միջոցառման
բոլոր
կազմակերպիչներին
եւ
նշեց
,
որ
վրացական
հարուստ
մշակույթը
հարուստ
է
նաեւ
նրանով
,
որ
դրա զարգացման ճանապարհին
իրենց
մշակութային
մեծ
հետքն

ու
ներդրումն
են
ունեցել
Վրաստանի տարբեր
ազգերի
ներկայացուցիչները
:
Հուշաքարի հանդիսավոր բացումից հետո միջոցառումը շարունակվեց Ախալցիխեի պետա
կան դ
րամատիկական
թատրոնում
,
որտեղ
իրենց
հիասքանչ
կատարումներով
հանդես
եկան

«
Կարին
»
երգի
եւ
պարի
ազգագրական
համույթն
ու
կոմպոզիտոր Գեւորգ
Մանասյանի
երգչախումբը,Ախալցխեի
վրացական
դպրոցների
պարային
խմբերը
:

Ինչպես հուշաքարի բացումը, այնպես էլ Պետական Դրամատիկական թատրոնում տեղի ունեցած
միջոցառումը
կազմակերպվել
էր
Ախալցխայի
քաղաքապետարանի
ֆինանսական
աջակցությամբ
: